Վեոլիա ջուր ընկերության համապատասխան
ստորաբաժանմանն ուղղված հարցում

լագրող Փառանձեմ Հովհաննիսյանից

Հարցում

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42 և 51 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ՝ ներքոնշյալ հարցերի մասով.

1. Ե՞րբ է Կապան քաղաքի Կավարտ բանավանի ջրամատակարարումը սկսվելու

2. Կապան քաղաքի Կավարտ բանավանը ե՞րբ է ջուր ունենալու

3. Ինչպե՞ս է ընկերությունը փոխհատուցելու ջուր չլինելու պատճառով նորածինների մաշկին հասցված վնասը

4. Ինչո՞ւ Կապան քաղաքի Կավարտ բանավան ջուր չի մատակարարվում

5. Ինչո՞ւ թեժ գծին ուղղված հարցումներն ու զանգերը պատշաճ պատասխան չեն ստանում

6. Այս հարցման պատասխանը կարո՞ղ եմ ակնկալել օրենքով սահմանված ժամկետոում, թե՞ ջրի պես ցրելու եք

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Շնորհակալություն

Լրագրող՝ Փ. Հովհաննիսյան 093-01-98-44